ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

«ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Ա.Հարությունյան

Հարգելի Ա. Հարությունյան,

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 8 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի(այսուհետ՝ Գնորդ) և «ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև **14.01.2022թ.**-ին կնքվել է **ԱՔ-ԹՑՄ-ԳՀԱՊՁԲ-22/1-3** ծածկագրով Ապրանքի մատակարարման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

01.06.2022թ.-ին Ձեր կողմից ներկայացված գրության համաձայն հրաժարվում եք պայմանագրի հավելված 1-ում ներառված 11-րդ չափաբաժնի(կարտոֆիլի) հետագա մատակարարումից:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, **«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը** հարկադրված է 2022թ. հունիսի 06-ից Պայմանագիրը նշված ապրանքի մատակարարման չկատարված մասով մասնակի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվեն որակավորման և պայմանագրի ապահովումներ, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետի համաձայն «ԱԼ ՍԹԱՐ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի թիվ 8 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

Տնօրենի ժ/պ **Տ. Մուրադյան**

L.S.